


ԲԱՏԱՆՆԵՐ ԿՊՐՈՒԹԻՒՆ
 Պուլխարիոյ համար
 Տարեկան 12 ծր.
 Վեցամսեայ 6 »
 Արսասահմանի համար
 Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ծր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԻՐՆԵՐ
 Իր սկզբունքները սոցիալական հոսանքի համար 40 ամսական է. իսկ վերջին երեսի համար 20 ամսական է. երեքին ամսեայ անգլալեզու համար 20 ՍՊՈՒՅԻՆ կը լրջայ :

Վառճառի համար ձեռքի 10 ամսական



Նամակ և գրաւ դրկեց
 Խմբագրութեան հասցիին
 Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 R. P. Kalémcarian, Mechitharistengasse W. 4
 Vienne
 «Charjoum»
 Varna (Bulgarie)
 Իրոքիւնիս յին տրուի
 Արսասահմանի ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պուլխարիոյ համար ձեռքի
 = 15 ՍԱՆԹԻՄ =

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԻՔԵՇԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՕՐԵՐԸ

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Իշխաւոր գործակալ
 ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇՆԱԿԱՆ
 ՍՕՅԻՆԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՆ
 ԿԱՆՈՒՄԻՏԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ
 Տօմսակ գնել փոփոգողները կրնան
 իրեն գիտել
 Ձար-Պորիս փողոց Վառճա

**ՀԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍԲԸ
 ԶԵՆՔՈՎ ՊԵՏ Է ԼԻՆԻ**

Բաւական ժամանակ է որ մեր
 յեղափոխական տարրը, կօրծես
 թէ յոգնած և հիասթափված զուտ
 յեղափոխական գործունէութիւն
 նից, մասնաւոր ջանքեր է թափում
 Եւրոպան մեզնով զբաղեցնել
 խնդրելով, աղաչելով և մեր
 ցաւերը նրան պատմելով, մի
 միջոց, որի ոչ այնքան կարեւոր
 լինելը վաղուց ապացուցված
 ճշմարտութիւն էր հայ յեղափոխականների
 համար, և որով հիանում էին միայն
 մեր պահանջները և կիսաազատականները:

Հայ յեղափոխականը իր գործունէութեան առաջին օրից էլ
 գիտէր որ մեր ժողովուրդը առանց
 Եւրոպայի միջամտութեան չը
 պէտք է կարողանայ իր ազատութիւնը
 ձեռք բերել, բայց գիտէր և այն,
 որ այդ բաղձալի միջամտութիւնը
 կարող է տեղի ունենալ ոչ թէ
 մուրացկանութեամբ և լալկանութեամբ,
 այլ զէնքը ձեռքին, պատուաւոր կռիւ
 մղելով բռնաւորի դէմ:

Այսօր կարծես հայ յեղափոխականը
 մոռացել է իր համոզումի ամենակարեւոր
 և հիմնական մասը ու, զուտ յեղափոխական
 ու է գործ բարձի թող արած, իր
 ամբողջ յոյսը Եւրոպայի վրայ դրած,
 իր ձգտումներով և գործունէութեան
 ձեռքով գրեթէ չէ տարբերվում
 մեր հնաժողովուրդի պատականներից:

Փաստները ասածներս:

Մեր յեղափոխականների մի մասը
 դիմումներ է անում Եւրոպական
 պետութիւններին Սուլթանին
 զսպելու համար, որքան ծաղրելի
 և հնացած միջոց, այնքան, որ
 իւրեքն Կոնստնտնուպոլիսում
 և այդ տղեղ փաստի համար
 մասնաւորապէս գրիչ վերցնել
 և հայ յեղափոխականին մի լաւ
 դաս տալ:

Մեր աւելի կարմիր և գործօն յեղափոխականներն էլ զգալապէս
 զբաղված են Եւրոպայով. միայն
 սրանք Եւրոպայի ժողովուրդներին
 են դիմում, ոչ պետութիւններին:
 Դիմումը կատարվում է Պրօ-Արմէնի
 միջոցով, որ նկարագրվում են
 միմիայն հայ ժողովուրդի կրած
 դժբախտութիւնները, շարունակ
 միտնման տաղտկալի և ոչ այնքան
 հետաքրքիր Եւրոպայի համար,
 որովհետեւ այնտեղ հայը
 ներկայանում է իր վիճակին
 արժանի մի ոչխար, որը միշտ
 պատրաստ է գայլի զոհ լինելու,
 առանց դիմադրութեան մի ճիգ
 թափելու տրամադրութիւնը
 ունենալու:

Պրօ-Արմէնի օգտակարութիւնը
 որոշ չափով անուշանալի է, ու
 աւելի անուշանալի կը լինէր,
 եթէ այդ թերթը որոշ կերպով
 արձանագրէր և հայ ժողովուրդի
 դիմադրութեան փաստերը.
 բայց նրանով ոգեւորվելու չափը
 այն աստիճանի հասցնել, որ
 զուտ յեղափոխական գործը
 մոռացվի, այդ յեղափոխականների
 կողմից կատարել սխալ է և կենդանի
 գործը մեռցնել է նշանակում:

Շատ յեղափոխականներ, մասնաւոր
 կարեւոր ու զեկավար յեղափոխականներ
 չափից աւելի ոգեւորվեցին Պրօ-Արմէնի
 տեղեր եղան, որ նրանք չը
 մասնակցեցին յեղափոխութեան
 համար կատարված հանգանակութեան,
 բայց Պրօ-Արմէնի համար
 դրամահանակեցին: Մի գործ,
 որը աւելի յարմարում էր Առաքելի
 աններին, Չօրանեաններին...
 քան թէ յեղափոխականներին:

Ինչով բացատրել այս անբնական
 երեւոյթը, մեր յեղափոխական

խական լինելուց դատարելովը, թէ
 խելօքանալովը:

Ինչու այսօր մենք ամբողջովին
 ներկայում են ենք այնպիսի մի
 գործունէութեան, որի վրա սրանից
 մի քանի տարի առաջ ծիծաղում
 էինք և այդ տեսակ գործերով զբաղվող
 զբաղվողներին արհամարում էինք:
 Արդեօք իսկապէս համոզվել ենք
 թէ մենք անցեալում բոլորովին սխալ
 ճանապարհով ենք ընթացել, թէ
 մենք այլևս յեղափոխականներ չենք...:

Ի՞նչ կարծիքով մենք դադարում ենք
 յեղափոխականներ լինելուց, մենք
 վերածվում ենք դիպլոմատներին,
 լալկան մուրացկաններին, և լոկ
 քաղաքակրթական գործիչներին:

Մենք հեռանում ենք յեղափոխութիւնից
 և մահանալու ճանապարհն ենք
 բռնում: Մենք խաբում ենք
 ժողովուրդին թէ յեղափոխութեամբ
 ենք զբաղված:

Հայ յեղափոխութիւնը չը մեռցնելու
 համար, մենք յեղափոխականներ
 պէտք է մնանք. մեր եռանդը չը
 պէտք է վատնենք այնպիսի միջոցներ
 վրայ, որոնց դրականութեանը
 աշխարհիս ոչ մի յեղափոխական
 չէ հաւատացել և չէ հաւատում:

Մենք երբեք չը պէտք է մոռանանք
 որ հայը իր վերջին խօսքը զէնքի
 շաչիւնով պէտք է տարի. և ոչ թէ
 լացով և դատարկ Ֆրազներով:

Լացը, Ֆրազները, դիպլոմատութիւնը
 թողնենք հայ ժողովուրդի
 այն մասին, որը միայն այդ
 միջոցներով կարող է մեր ժողովուրդին
 օգտակար լինել. յեղափոխական
 տարրի մէջ չը մտցնենք այդ
 թուլացող, մեղկացնող յատուկ
 թիւերը, որոնք տանելի են միայն
 յոգնած, թերհաւատ և ոչ անկեղծ
 յեղափոխականներին:

ՎԱՐԴՈ

Վառճա 21 օգոստոս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՒԼԻՆԱ 10 Օգոստոս

Տեղոյս եկեղեցական խնդիրներ
 շատերուն արդէն յայտնի է, որովհետեւ
 քանի մը անգամներ է որ այդ մասին
 կը հրատարակուի «Շարժում» մէջ:
 Այժմ ալ կուգամք համառօտ կերպով
 ներկայ շարժառիթներ հաղորդել
 «Շարժում» պատուար ժան ընթերցողաց:

Բաւական ժամանակ է ի վեր է որ
 երթալով ժողովուրդը կը պաշտօնի
 իրենց Մայր եկեղեցիէն, նոյն իսկ
 կիրակի օրեր հազիւ 3-4 կամ առ
 առաւելն 6 անձինք Ս. պատարագին
 ներկայ կը գտնուին. շատ անգամներ
 ալ, քահանայ կը դառնայ սեղանէն,
 կը նայի որ ոչ ոք չկայ հոն բաց ի
 իրմէ և երկու տիրացուէն, վարկիչնայ
 այլ ևս պատարագ չի մատուցեր:
 Արդեօք ինչ է պատճառը այս ամէնուն,
 եթէ մեր տէր հայրը՝ կուզէ
 իմանալ, թող բարեհաճի հարցնել.
 պատասխան դուրին է մենք կը
 պատասխանենք:

Բայց ժողովուրդ տեսնելով որ բռնած
 ընթացքովը դէպի խաւար կ'առաջնորդուի
 այլ ևս չուզեր անտարբեր մնալ,
 եթէ քահանային ձգուի «Իրեն
 միտքը դէպի պալատն նրան պէտք է
 լոկ մեր փարայն» 1900 Յունվարին
 տեղ մը վարձեցին վարժատան
 համար, Տէր հայր այդ օգտակար
 ձեռնարկին արդեւք եղաւ, ժողովուրդ
 այն օրէն սկսաւ յուշուիլ և պահանջեցին
 թաղականներէ որ այլ ևս քահանային
 ամսական չը տրուի, 7 տարի էր որ
 հոս կը պաշտօնավարէր արդէն հերիք է:

Ինք չը հեռանալէ զատ, իր ամսականները,
 փոխանակ ժողովուրդէն
 գանձուեցաւ եկեղեցոյ պաշտիկ
 գանձէն:

Այժմ հասարակութիւնս յուշուած
 ու համոզուած ըլլալով, որ պէտք է
 այս քահանայ ըստ սահմանադրական
 օրինաց դադարիլ իւր պաշտօնավարութեան
 և տե...

զը հրաւիրուի այնպիսի քահանայ մը խաղաբարձր, ժողովրդասէր, ուսումնական և քիչ մը ալ քարոզիչ, որ կարող ըլլայ ժողովուրդը իւր արդար շահին մէջ հովանաւորել և մտադ սերունդի զարգացման համար ալ օգտակար հանգիստեալ :

Այս նպատակով ամսոյս 5ին, կիրակի օր եկեղեցին խառն ժողով հրաւիրուեցաւ, բայց ոմանք գործով՝ ոմանք ալ և ալ պատճառներով չը բարեհաճեցան ներկայանալ : Նոյն իսկ թաղ. անդամներէն կարգ մը պարոններ ալ խոյր աւելին ժողովէն : Հաղիւ 25—30ի չափ այցելած էին և առանց արդիւնքի յետաձգեցին :

Իսկ ժողովուրդ անհամբեր կը սպասէ այս խնդիրներու կարգադրութեան : Կը սպասենք երբ օրինաւոր լուծման մը յանգի այն միջոցին զովեստով մը պիտի յայտարարուի, իսկ թէ ոչ մանրամասնօրէն հաղորդելու ենք ճարտարապետի միջոցաւ ի դիտութիւն հանրութեան :

Այսու ամենայնիւ կը յորդորեմք Տէր պապային որ առանց գրգռութեան տեղի տալու լաւ կընէ որ դադարի քաղաքիս մէջ իւր պաշտօնավարութենէն, ինչու որ ժողովուրդ միհամուս կը կուշէ, հերիք է 7—8 տարի մէկ տեղս պաշտօնավարէ :

ՎԱՀԷ

ՎՐԵՔԻՆԴԻՐ ԶԱՅՆԸ

Հայ դժբաղդութիւնը՝ Եւրոպայի մէջ, ամէն տեղ յարուց Ռճիրին տուջեւ վրդովուող դիտակցութիւններու զայրոյթն ու կարեկցութիւնը : Եթէ կառավարողները՝ մեր երկրորդ գահիճները՝ ցածու թեմաք ու վատութեամբ իրարու հետ մրցեցան Սուլթան Համիտին յորդանքին մէջ մտնելու :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿԻ ԽՂՃԱՆ ՈՉ ԿԻ ՍԻՐԵՆ

(Շար. նախորդ թիւին)

XV

Տղաքներ, նոր լուր, երէկ Պապին նա-կլավախ (*) մօտ առաջին ճակատամարտը տեղի է ունեցեր, սերպերը յաղթել են : Վիվա, բոլորն ալ զարմացած ու ոգեւորուած ոտքի ելան :

— Պատերազմ, պատերազմ : Առէք կարգացէք հեռագիրը, աւելի ընդարձակը... Կրօնովի ձեռքէն յափշտակեցի, անպիտան հաստափորը, շարունակեց դեռ շնչաս :

(*) Պատակի-գլուխ :

լու, անոր արիւնթաթախ ձեռքերէն զփորի վրայ պսակած իրզելու, գոնուհեցան սակայն արիւնք, որ չը գաղտնեցան իրենց արգարադործ ձայնը բարձրացնել մեր խողխողուած եղբայրներուն ի նպաստ :

Բայց այս ամէնուն մէջ, անուն մը հայը երբէք պէտք չէ մոռնայ : ԻՒՌՊԷՆ ԿՕՂԻՆ : «Օտոտի խմբագիրը, մասնաւորապէս իրաւունք ունի մեր ազգային երախտագիտութեան անպայման կերպով :

Օր մը, երբ մեր հայրենիքը մեզի համար աւելի սասնակաւ դառնայ : Օր մը երբ մեր պաշտօնունքին հարկը մատուցանելու ժամանակը գայ, պէտք է ամենէն առաջ մեր երախտագէտ նախածքը սեւեռի բարութեան ու վեհանձնութեան այս բարձր ու անբաղաւոր դէմքին :

Այսօր մտադրութիւնը շուրճիմ ֆրանսական ժամանակակից լրագրութեան մէջ այս մէկ հատիկ վարպետը ներկայացնելու մեր ընթերցողներուն, Այդ աշխատութիւնը որիչ անգամ Բայց արդէն որ հայ չի գիտեր այս վրէժխնդիր ձայնը որ փառքը կը կազմէ ոչ միայն ֆրանսացիին այլ և ամբողջ մարդկութեան : Ահաւասիկ հայերու վրայ իր վերջին յօդուածը :

ՄԵՐ ԱՄՕԹԸ. — Լոնտոնի Հնչակեան յեղափոխական Գոմիթէին՝ Եւրոպայի կառավարութիւններուն ուղղած յայտարարութիւնը երկուշորի՛ օրը հրատարակեցինք :

Երբ Հայաստանի մէջ «նոք կոտորածներու» վրայ կը խօսուի, վեհապանք կոտորածներու, բնաջնջումի կոտորածներու վրայ է խօսքը : Երբ մահու մասնաւոր ջարդերը երբէք չեն դողարձ, Վեց տարիէ ի վեր մեծ մարդասպանը փոքրաքանակ խողխողումներու գրութիւնը յաղթականօրէն դործադրեց :

Պէտք է հիանալ զոճերուն՝ քրիստոնեայ Եւրոպայի կարծեցեալ գլխութեան մէջ ունեցած յամառ վատահոյ թեան վրայ : Արեւուտքի ասպետները (paLadin) կայսրերը, թագաւորները, հանրապետութիւնները ու պուպը՝ իրենց 300,000 եղբայրներուն՝ խողխողոցներու ճակատին կամ զանակին տակ ինկած պահուն, զոր տեղը օգնութեան կանչելէ յետոյ, հայեցող տեսակ մը քաջութեան պէտք ունին դարձեալ աղերսագիր մը խմբագրելու համար :

պառ ու շառագունած Մաքէտօնսթին, Ռուսները տեսնելուն պէս իր մաճառի գլխարկը վար առաւ, յարգանքով ժպտեցաւ և ձեռքը անոնց երկնցուց :

— Բարե՛ւ, քաջեր, կեցցէ Ռուսիան :

— Բարե՛ւ պուլխար եղբայր, պատասխանեցին անոր ուսու կամաւորները, զգացմամբ ձեռքը սեղմելով :

Բայց և այնպէս ոգեւորութիւնը իր գագաթնակէտին հասած էր, Հեռագիրը ձեռքէ ձեռք կը թռչէր, ամեն մէկը իր սեփական աչքերով կուզէր տեսնել այդ լատինական տառերը որոնք յաղթութեան ուրախակիր լուրը կուտային : Պապինա-կլավա յատուկ անունը հրաշագեղ պատկերի մը զմայլանքը հագաւ :

Փոքրիկ Սերպիական բանակի առջի քայլերը յաջողութեամբ, յաղթութեամբ պատկուած էր : Մէկն ալ չէր յուսար : Գարատաղիները վճռեցին իսկոյն իրիկուան կառախտութեամբ ու Սէվէրին երթալ, և այնտեղէն ալ

Չոն անանք որ Անգլիան հարաւային Աֆրիկէի մէջ ամբողջ ցեղ մը ջնջելով գրադուած է. ու մեծ պետութիւնները միացած են 100,000 Ձինացիներու զիակը կողոպտելու համար, Ինչու կուզեն որ Եւրոպան արգիլէ Ապտիլ Համիտը՝ փոքր-Ասիայի մէջ ընելէ ինչ որ ինքը ծայրագոյն-Արեւելքի մէջ տակաւին երէկ կատարեց :

Եթէ Սուլթանին միլիտան՝ կամ դիսպանատուներուն մէջ շահադիտական մեծ գործեր ունենային սուալարկելիք, հայերը չուտով զիրենք լսել պիտի տային :

Տարիներով ամբողջ, Ֆրանսան, հոյակաւոր ֆրանսան, ընդհանրապէս ամէն կեղեքուածներու ու մասնաւորապէս Արեւելքի քրիստոնեաներու պաշտպանը՝ իր ականջները գոցեց իր «պաշտպանեայնութեան» հողիվարքի աղաղակը չը լսելու համար : Երէկ, քանի մը ժամուան մէջ, շարժուն վիճակի մէջ դրաւ նաւատորմի մը՝ մէկ քանի շահագէտներու գրամական պահանջները պաշտպանելու համար :

Ինչ նողկանք պէտք է զգան այս բոլոր օտար պզտիկ ժողովուրդները՝ զորս աւանդութիւն մը վարժեցուցած էր իրենց աչուրները դարձնել մեզի իրենց դժբաղդութիւններուն մէջ, և որ հիմա կը ճանչնան մեզ մեր իսկական զոյնովը : Ու ինչ պիտի չանէին փոփոխութենէն՝ եթէ պաշտպանութեանը և համախոհներու տեղ իրենց զրկելիք Մատակոսգարի և Ձինաստանի մեր գահիճները :

Հայկական խնդրին վրայ ճշմարտութիւնը իմանալով ամբողջ աշխարհը սարսափէ դողաց :

Բայց ինչ որ ժողովուրդները չափազանց ուշ իմացան, կառավարութիւնը ժամանակին գիտէին. նախարարները՝ օրը օրին դիտակներու և հիւսապտոսներու հեռագիրներուն մէջ հետեւած էին անելի ոճիրներուն զորս իրենց միջակակից լուրթիւնովը կը ծածկէին :

Ու լրագրիները, նախարարներուն պէս կը ստիկին, Թրքական ոսկիները՝ դիտակներու ինչպէս խմբագրատուներու մէջ հրաշքեր կը գործէին :

«Բըթի ժուռնալ»ը Ֆրանսան կուղղէր պատկերներով և յօդուածներով՝ որ «Հայերու կողմէ Թուրքերու

ջարդը» կը նկարագրէին : Հարիւր ուրիշ թերթեր միեւնոյն վատութեամբ կը հարստանային... :

Ահաւասիկ ֆրանսական ժողովուրդին մամուլը : Ու Ֆրանսայի հանրապետութեան կառավարութիւնը Ֆէլիքս Ֆոնէ է կամ Լուպէն, մարդասպանին աղամանդէ թուրքերովը (պատուանշան) զարգարուած սպանութիւններու վայրկեանին իսկ. Հանօթօն է, Գօնթօն է, Տէլքաւէն է, Կրէշին ծառաները. Տէլքաւէն է, որ պապին հողախփը պազնելէ առաջ Ապտիլ Համիտին կարմիր թաթը պազնել գնաց ու Պօլիսէն բերաւ քաղմաթիւ ծրարներու մէջ, զիակներու գինը. Սորհրգարանն է, ազգային կամքը (representation nationale) որ Սէրայէն հազիւ հասած այս մարդու կը նորէն նախագահ ընտրեց, ամբողջ աշխարհին առջեւ անոր շահականութեան հետ համեմատելու և անտարակոյս անոր շահերուն մասնակից ըլլալու համար :

Հայաստանի և ամէն հարստահարուած ազգերու հէ՛զ բարեկամներ՝, երէկուան այս իրողութիւնները մոռցա՞ք ուրիշ, Ինչպէս սիրտ կընէք ձեր գահիճին ընկերները, մեղսակիցները անկէ վարձուածները պաղատել : Ինչպէս չէք խղճար պաղատել այնպիսի մարդիկ՝ որ իրենց ձեռքը զրին ձեր եղբայրներու արիւնովը պղծուած ձեռքին մէջ և որ անկէ շորթեցին ոսկեղբայրներու աղամանները, յիտութիւններու կամ պաշարայանձնութիւն առուտուրներ, իրենց լուրթեան իրրեւ վարձք :

«Չո՞ թուրի ձեղի թէ տեսակ մը օրրա պղծութիւն է որ կը գործէք ու մեռածներու յիշատակը կը նախաւոր սպանիչներու առջեւ այդքան ակնածութեամբ :

Անոնց ամենէն գարշելին Հանօթօ կը կոչուի :

Ուրիշ տեղ, տեղի մանրամասն պատմեցի ոճիրին ծառայելու համար իր սուսերուն ճարարը շղթայուած : Հանօթօ նախարարին՝ Մատակոսգարի խնդրին ու Տրէյֆիւսի գաւին մէջ ամօթալի գործերը, զասը հասարակ սասանակներ անպատուելու բաւական, Հայաստանի կոտորածներուն մէջ իր մասնակցութեան քով կը դժգոհեն : Իշխանութեան զուլս եղած ժամանակ, 1894ին մինչև 1895, Պ. Հանօթօ ստացաւ «հարիւր ինը» նա-

— Բանահօ՛թ :

— Կեցցեն կամաւորները, կեցցեն բոլոր սլավեան քաջերը, գոչեց Մաքէտօնսթին, և ծարաւ ծարաւ շամբանիայի գինին կոնծելով սուս կամաւորներուն շնտանեարար խնդարով իր երկար պեխերը սրբեց :

Ուրախութիւնը ու ոգեւորութիւնը կաճէր : Հայդուկները թեւեր առած անհամբերութենէ կը առչուրէին ժամ մը առաջ Վրատօօ մեկնելու, կը վախնային որ իրենք չի հասած չըլլա թէ յաղթանակները կը վատաբերուին և օվիտատարով զաւրով անոնց հաղորդեց որ երկու օրէն յետոյ Պուքրէշի «Երիտասարդ» կոմիտէարը (*) ամենտես ալ երկաթուղիի տոմսակները ու ծախսերը պիտի հայթայթէ : Ատուռն շարժուելու աւելի մեծ էր : Յեղափոխականներ,

(*) Պուքրէշի պուլխար բարեգործական կոմիտէարը որ իրրեւ յեղափոխական մարմին կազմակերպուած կը գործեր :

մականեր ու հետագիւրներ՝ Սասունի Տրապիզոնի, Պոլսոյ կոտորածներուն առիթով Ամէն անգամ որ խորհրդաբանէն կը հարցաքննուէր, ջարդերու պատմութիւնն ու զոհերու մարդահամարը իր թղթապանակին մէջ ունենալով՝ իր պատիւին վրայ երգուրննալով կը հաստատէր թէ՛ թուրք կայսրութիւնը բացարձակապէս խաղաղ էր :

«1895 հոկտեմբեր 31ին, իր անկումին նախորդ օրը, Պ. Հանօթօ ջարդերու վրայ «հարիւրիներորդ» անդակագիրը կը կարգար. միաներուն մէջ ան ալ կը խղզէր, «րդեկ-տեմբեր մէկին, «Մեր վրա տը Բատիւն» մէջ կը հրատարակէր տարապայման ներքողովի յօդուած մը ի պատիւ Ապտիլ Համիտի՝ որուն «քաղցրութիւնն ու վեհանձնութիւնը» կը փառաբանէր մանաւանդ :

Ամէն պարկեշտ մարդու կը հարցունեմ. Հայաստանի կոտորածներուն մէջ Հանօթօ Թրանսաքի նախարարին պատասխանատուութիւնը հաւասար չէ՞ թուրք Սողխողդին պատասխանատուութեան :

Ու կըսեմ թէ՛ այս մեղսակցութիւնը ձրի կամ վճարուած, ամէն պարագայի մէջ կամուտ ու զիտակից էր : «Իրանցէք Պ. Հանօթօն : Անոր տեսքին վրայ պիտի ըսէք. «Թոտոցած մըն է. խոշոր անմիտ մը, իր անհնարին բաղդաւորութենէն յիմարացած միջակ պաշտօնեայ մը» : Բայց չէ՛. այս տխմար չար մըն է մանաւանդ : Իր նեղ խելագատակին մէջ, ոճիւր յղացած է իրեւ ամենէն ապուհով տարբը յաղորդեան եւ մեծութեան : Տանիններորդ դարու մեծագոյն ջարդարձութեան արձակ համարձակ ընկերանայէ ու անոր ջատագովութիւնը ընելէ առաջ, Պ. Հանօթօ անոր տեսութիւնը ձեւակերպած էր :

1886էն իսկ կը գրէր. «Նենգութիւնն ու սոււը՝ մարդիկը կռուավարելու արուեստին էն անհրաժեշտ մասերն են, աւաղ :

Դիւանագիտութիւնը պատիւ կը սեպէ այն խուլ մեքենայութիւնները, որ յարմար ժամուն կը պայթին ու օղը կը թուցեն, հակառակորդին հըսկայ ծրագրիները :

Նոյնպէս, «սողութիւնը» թէ՛ ան երեւան գայ ողբերգական եղանակով մը, պատերազմներու տենդին մէջ, կամ թէ՛ ծնի՝ այն բարձր ու հարատ

տիրապետուէն զոր մայր ինք իր վրայ կը գործադրէ, երբ, գերագոյն համարուած պատճառի մը անունով իր գուժի բնագոյնը կը խեղդէ. անգլթութի նը իր ազնիւ, մեծ, անհրաժեշտ ու պէ՛տք է ըսել, չքմեղելի կողմը ունի» :

Կը գրանք վայրագ գագանր : Շարունակութիւնը մտիկ ըրէք :

«Բայց մանուածապատ ու երկար պատրաստութիւնը կցել յեղակարծ կատաղի գործադրութեան. ցանցի մէկ հարուածի մէջ առնել, լախտի մէկ հարուածով մը զարնել տնտեսներ ու մեղաւորներ, անտարբերներ ու թշնամիներ, կիներ ու տղաքներ, աչքերդ փակել անոնց պաղտտանքներուն, ակամջները խցել անոնց հեծեծանքներուն, ըմբոշինել այս զարհուրելի ուրախութիւնը. հաւատալ որ յաջողած ես, որ ամէն բան ըմպած է, երբ փողոցները աւելոյր վերջին արիւնուշտ առուակը մաքրած է. այդպիսի յաջողութեամբ մը երջանիկ ըլլաս :

— Ահաւասիկ արդարեւ ինչ է քաղաքական հաստատութեան ու ինք իր վրայ տիրապետութեան յաղթանակը» :

«Հոտ է որ քաղաքականութիւնը իր կատարին կը դպչի : Ատոնք այնպիսի գործեր են զոր պատմութիւնը կը դիտէ յարգական զարկանցումով մը» :

Հիմա կը հարցնեմ ոչ այլեւս պարկեշտ մարդերուն, հապա հիմարաբոյժ բիշկիներուն թէ՛ այս էջին հեղինակը պէտք չէ՛ որ 1886էն ի վեր խելագատուն մը գրուած ըլլար, հասարակաց ապահովութեան շահուն համար :

Ձինքը արտաքին գործերու նախարարութեան մէջ գրին : Ան իր իստալը Ապտիլ-Համիտին ու իր երազը Հայաստանի մէջ իրականացած գտաւ :

Հարստահարուած ազգերու խեղճ բարեկամներ, ի՞նչ կը յուսաք Թրանսաքի մը որ կարմիր-Քաղանը գերարագանցեց Սուտանի Մատակոսգարի, Չինաստանի մէջ և որ իրեն նախարար կընտրէ Հանօթօները :

ԻՒՍՊԷՆ ԿՕՀԻԷ

Հարկ է մեկնել այսպիսի հոյակապ ու յստակ էջ մը : Բայց եթէ աշխարհի վրայ արդարութիւն մը կայ, հայերը իրենց տառապանքի բոլոր եղբայրներուն հետ իրենց յոյսը դրած են անոր մէջ : Նոյնիսկ ամենէն անհոգի ստուէրներու վատութիւնը բըռ-

նաւորներու ապահովութեան երաշխիկ չի կրնար ըլլալ :

Հայերը իրենց վերջին բառը չըսին տակաւին :

Հայկազուն

Բարից օգոստ 26

ՆԱՄԱԿՆԵՐ ԿՈՎԿԱՍԻՑ

I

Կովկասից լուրեր, տեղեկութիւններ էք խնդրում, բայց ի՞նչ լուրեր, տամ ձեզ. լուր, տեղեկութիւն կարելի է այն տեղից տալ ուր կեանք կայ, միտք, եռանդ ու ոգեւորութիւն որ և է գաղափարով : Կովկասահայերս այդ ամենինց զուրկ ենք այսօր, մեր կեանքի մէջ ոգեւորող, կազդուրող մի բան չըկայ, մեր գրականութիւնը մեռնում է, գրագէտները կամ գրիչները կտարել են կամ թէ սկսել են Հնով զբաղվել : Գրա պատճառը կամ այն է որ ժողովուրդն է քնում, կամ թէ իրենք գրագէտները հիւժժիլ ու մաշվել են, և հնախոյններ են դարձել իրենց օրական ապրուստը ճարելու համար : Պատմութիւնն ու անցեալն են քրքրում, կարծես թէ ներկայ կեանքը նիւթ չէ տալիս Մեր մամուլը, ինչպէս մեր արեւմտեան եղբայրներն են ասում. «լլըճուկ» բան է գարձել, չըկայ այլեւս այն թարմ, նոր կեանք բուրոյ շնչող մամուլը, չը նայելով որ մեր լրագիրների զեկավարները կրկին իրենց վրայ շատ մեծ համարում ունեն և կովկասից զուրօ գըստնված մամուլին ոչ միայն չեն հաւանում, այլ և տրտմագիր են արհամարել :

Մեր մամուլի տեղական ներկայացուցիչները այնքան էլ մեջտաւ որ չեն որ հետզհետէ աւելի են համոզվում թէ՛ հայ ազգի լուսաւորութեան ջահը իրենց

ձեռքումն է գանձում և շարունակ էլ ոչէտք է մնայ իրենց ձեռքումն Մեղաւորները նախ նրանք են, որոնք տրապիցիայով կապված են մեր մամուլի ներկայացուցիչների հետ և զանազան մանրամունք հաշիւներից գրգռված չեն ուզում այդ կայերր կտրել և արտասահմանի մամուլի մասին շարունակ աննպաստ են խօսում :

Երկրորդ իրենք, արտասահմանի մամուլի ներկայացուցիչները. որովհետեւ ճիգեր չեն թափում կովկասահայերիս ծանօթացնել արտասահմանի հայ գրականութեան և մամուլի ոգու ու տրամագրութիւնների հետ. գոնէ չեն՛րում այն մեծամիտ ու փքուն գատավճիւրները, որ տրվում են արտասահմանից տեղական թերթերին :

Այդ փքուն գատավճիւրներին նայելով, արտասահմանի այն երիտասարդութիւնը որ իրեն նուիրել է հայ գրականութեան, միմիայն մի նպատակ է ունեցել. այն է խմբագիր դառնալ և կուսակցութիւններ ստեղծել : Հայրենիքի ցաւերը ոչ մի նշանակութիւն չեն ունեցել այդ երիտասարդութեան համար, գլխաւոր դերը կատարել է միայն եսը և ինտրիզը : Արդեօք ճի՞շդ են :

Մենք գիտենք որ հայերը անհատապէս մեծ եսեր ունին, սակայն բոլորովին չենք ուզում հաւատալ որ արտասահմանում, ամէն մի օրկան լոկ եսի համար է հիմնվել : Յետոյ, քիչ զմեռակի կերպով էլ լսում ենք որ արտասահմանեան հայ մամուլը, իր պակասութիւններով հանդերձ, իր հարձատեւ գոյութեան մէջ աւելի է զբաղվել հայ ժողովրդով և նրա ներկայով, քան կովկասի մամուլը, որը այժմ միմիայն վաճառականութեան ու ամենանեղ կուսակցականութեան է վերածվել : Լսում ենք և այն որ արտասահմանեան հայ մամուլը ամէն

փաստականներ բողոքն ալ Բանակիւրիթի ապստամբութենէն, որ սուկայի ջարդով վերջացաւ հին հայդուկներ 1862 թուականի կուռողներէն, և 1867-8 թուականի րոսակախութեան մասնակցողներ, սպարտիկականներ, նապոստալաններ, աղլուսագործներ, գործաւորներ Ռուսականի բոլոր ծայրերէն Պուքէշ կը վազէին Սերպիա ելթալու : Ամէնքն ալ հապճէպով, ամեն բան ձգած թողած շատ վտանգաւոր ձեռնարկութեան մէջ կը մտնէին որ կամ իրենց գերեզմանները պիտի բանար կամ ալ յաւիտեան իրենց առջեւ պիտի փակուէր Պուլուարիայի դռները, որուն կապուած էին անհուն սիրով : Հիմակ թշուառութեան անդունդին մէջ կը նետուէին : Ինչո՞ւ. Հայրենիքի ապստամբութեան դատին ծառայած ըլլալու համար : Ո՞վ էր գիրենք գրողը : Ո՞վ էր վերենք հարկադրողը այդ ինքնագոհարարութիւնը ընելու :

Հարստութիւնը, փաստաւորութիւնը,

Ոչ : Ատ զգացումները անոնց համար շատ ցած էին : Տարբեր բան մըն էր որ անոնց սրտերուն կը ներգործէր. այդ ժամանակի ոգին էր, այն ոգին, որ կարճ ժամանակամիջոցի մը մէջ տառապալակ Պուլկարիոյ արգանդէն առջափ հոկայ զուակներ տարագրեց, որոնք իրենց քաջագործութիւններով ու զոհարարութիւնովը այդչափ փառաւոր էջեր տուին մեր պատմութեան, եթէ Սիմիտովի պարզ ու պերճախօս խօսքերովը մեկնենք. «Հայրենասիրութիւնը անբուժելի հիւանդութիւն» (**) մըն է : (***) : Ինքնագոհարարութիւններու ճիշդ ժամանակն էր, որովհե-

(**) Բուն - քասթա է, բորտութիւն ըսել է :

(***) «Քուրակեալ քաջութիւն» ժամանակակից յուճարիւնը : Սերպիա 1876ին դացած պուլկար հրոսակախութեան ֆ. Սիմիտով, Տիւրկէվօ 1877 :

տեւ մեծ հարստահարութեաններէն մեծ զիւցազնութիւններ կը ծագին, ինչպէս այսօր ալ փոքրիկ նկարագրներու ժամանակն է : Հայրենասիրական թելը բոլոր պուլկար վշտակոծ կուրծքերու մէջ, նրբացած, փափկազգոց և լարուած այնքան թեթեւ հովաւարութիւն մը զայն կը թռթռապնէր և տեսակ-տեսակ հնչիւններ կուտար անոր : Պուլկարիոյ այդ տարաբախտ թափառականները, իրմէ մոռցուած ու զէպքերու կամայականութեանը թողուած, հայրենիքէն որոտում մը. ցնցում մը լսեցին, իրեւ պատերազմի հրաւէր մը բռնաւորներուն դէմ, ու կը վերակենդանային, թարմ ուժեր կառնէին, կը վառուէին կշտապէին հայրենիքի խորտնին վերայ զըրարեղելու գրամը, կեանքը հանգստութիւնը և արիւնքը : Իսկ անոնք որ դրամ ու հանգստութիւն չունէին, կրնային իրենց արիւնք տալ, ինչ որ բաւական էր : Պատերազմի հրատարակութեան օրը ամենքն ալ տեսակ մը խելացնորութենէ յափշ-

տակուեցան : Վաճառեցին, երեսի վրա ձգեցին, նուիրեցին ու ընջեցին ամէն ինչ որ իրենց կը վերաբերուէր, որ պէս զի միմիայն Պուլկարիա սիրովը ստորուրին : Ինչպէս որ որ հին ատեն եթէ ներքի է այս համեմատութիւնը ընել, Մեծն Աղեքսանտրի Մակեդոնացիները ըրին ասիական ափը իրենց նաւերը այրելով, որպէս զի դառնալու վրայ չի մտածին :

Այս ամէնը մեզի այսօր անհաստալի կերեւայ :

Երեք օրէն վերջը կովկասով Պուքէշի կայարանէն ճամբու կը գնէր հայդուկներէ ու կամաւորներէ բաղկացած սուտար խումբ մը փառաւոր յաղթանակի ու յաջող վերադարձի բարեմաղթանքներով :

Կառախուսքը շարժեցաւ ու յեղափոխական խորտաւորը վակոններու անիւներու շունդայից շառաչիւններուն միախառնուեցաւ :

Շատ զուարթ օրեր էին Պ. ՍԻՐԷՄՁԵԱՆ (Շարունակելի)

ճիգեր թափել է իրարու կապել աշխարհի շուրջը ցաք ու ցրիւ եկած հայերին. մի դեր, որ երբէք չէր կարող կատարել կողմնակա՛ն մամուլը. Եթէ այս մեր ստացած տեղեկութիւնները ճիշդ են, հապա ի՞նչու արտասահմանի այդ «պատէնտովանդի» դատաւորներն բերնի շափր չեն տալիս:

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Լոյս տեսաւ Մխիթար անունով պատկերազարդ շքեղ գիրքը՝ Մխիթար Աբրայի երկահարիւրամեայ յորեւեանի առթիւ: Գրքին բովանդակութիւնը կը կազմեն հայր Մխիթարի և Մխիթարեան միաբանութեան անդամներուն կենսագրութիւնը և անոնց գործունէութիւնը: Դժբաղդար գիրքը չի ներկայացնէր միաբանութեան ամբողջ պատմութիւնը, որովհետեւ կարգ մը կարեւոր պարագաներու մասին լռուած է:

Գինն է 5 ֆրանք:

— Նոր կեանքի նախորդ երկու համարները արդէն կերպարանափոխուած էին, իսկ վերջին 13րդ. թիւը բոլորովին յեղափոխական թերթի մը բովանդակութիւնը ունի:

Վերակազմեալներու այդ օգնականին վերջին թիւը կը յայտարարէ որ վերակազմեալ Հնչակեանները պատրաստ են ամէն զոհողութիւն ընել, միայն թէ յեղափոխական կուսակցութիւններու միջեւ միութիւնը տեղի ունենայ: Ամբողջ համարը զգացմունքով կազմուած է և անկեղծութեան դրոշմը կը կրէ:

— Բարիդի մէջ սկսուած է հրատարակուիլ «Ազատ խօսք» անունով զաւելչակա՛ն թերթ մը որ անխնայօրէն կը ձաղկուն նշանաւոր հայ չորպաճի մը և քանի մը հայ գրագէտներ:

Թերթին ուղղութիւնը շատ համակրելի է եթէ ծաղրը միայն մեր հասարակութեան և մանաւանդ անոր զեկավարներու ծաղրելի կողմերը շտկելու նպատակով կատարուի:

Բարեմիտ հեգնողի խնդրքի մէջէն արցունքի կայլակներ պէտք է նշմարուին:

Բւ ցանկալի է որ «Ազատ խօսք» միշտ իր աչքին առջեւ ունենայ ազնիւ իւմորիզի յատուկ այս նկարագիրը:

Թերթը տարեկան առնուաղն 12 թիւ պիտի ըլլայ:

Գինն է 5 ֆր. իսկ մէկ թիւը 50 սանթիմ:

Հասցէ՝
M. Perrier Pour Azad Khosk
4 Rue des Guillemites Paris (IVme

— Վեհափառ կաթողիկոսը մտադիր է այսուհետեւ միայն հոգեւորականներ տեսուչ կարգել թեմական դպրոցներու մէջ:
— Թիֆլիսի առաջնորդը՝ Գէորգ եպիսկոպոս Սուրենեան իր պաշտօնէն հեռացուած է:

— Ռուսմանիոյ Սուլիմա քաղաքին հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցին համար քահանայ մը պէտք է: Ամսակա՛նը զոհացուցիչ է:

Ուղղները կրնան ուղղակի եկեղեցւոյն հոգաբարձութեանը դիմել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բարձրագոյն Դուռը կրկին շըրջաբերականներ զրկած է եւրոպական գահլիճներուն եւրոպական փոստաները վերցնելու առաջարկութեամբ:

— Հանդէսը որ պիտի կատարէր Բարիդի թուրք դեսպանը Սուլթանի գահը բարձրանալուն առթիւ ըստ «Թան»ի տեղի չի պիտի ունենայ:

— Թուրքիոյ ալաաքին գործոց նախարարը շըջաբերականով մը եւրոպական գահլիճներու առջեւ ֆրանսական դեսպան Գոնսթանը կը մեղադրէ Թրանս-Թրքական ընդհարման առթիւ և ճիգեր կը թափէ արդարացնել Բ. Դուռը:

— Մովսիսի և պատերազմական նախարարները ներկայիս Վոսֆօրը և Տարտանէյը պաշտպանելու ծրագիր մը կուսումնասիրեն:

— Թէև Գարափնիկու խնդիրը կարգադրուած կերեւար, բայց Պօլսոյ ֆրանսական դեսպան Գոնսթանը Բարիդ գացեր է: Սուլթանը շատ ջանացեր է Գոնսթանը համոզել ետ կենալու իր մըտադրութենէն սակայն յաջողած չէ:

Գոնսթան Բարիդ հասնելուն պէս իսկոյն տեսակցութիւն ունեցեր է արտաքին գործոց նախարարին հետ, տեսակցութիւնը բաւական երկար տեւեր է:

Կը հաւաստեն թէ՛ թուրքիոյ դեսպան Միւնիւր պէյն ալ Բարիդ եկեր է և տեսակցութիւն ունեցեր է Գոնսթանին հետ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

«Ստանտարթ»ի Պրիւքսէլի թղթակիցը կը հազորդէ թէ՛ նախագահ Քրիւկէր հեռագիր մը ընդունած է, որով իրեն կը հազորդուի թէ՛ Պօէրնբրուն օգնութեան եկող զինուած Աֆրիքանտէրներուն թիւը 12,000 ի կը հասնի:

— Անգլիական թերթ մը կը հազորդէ որ Լօրտ Սալզպրի թագաւորին գահակալութեան հանդէսէն վերջը պաշտօնէն պիտի հրաժարի:

Ռ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Պուքէշի մէջ սկսած է հրատարակուիլ բոլոր պալքանեան Օրթօոթքս ազգութիւնները միացման հրաւիրող թերթ մը:

Այս թերթը կըսէ թէ՛ պէտք է բոլոր պալքանեան փոքրիկ պետութիւնները միանան, նաեւ Յունաստան և Ռուսմանիա, և կը խոստանայ այն ատեն Ռուսիոյ աջակցութեամբ ազատուիլ իրենց այն եղբայրներուն՝ որոնք տակաւին թուրք բռնակալութեան տակ կը հեծեն: Այս թերթը հիմնողները եղած են Օտէսայի սլավասէր ընկերութիւնը և Էէթ. Վէտօմօսթի թերթին խմբագիրը:

— Ռուսմանիոյ արտաքին գործոց նախարարը յիշատակագիր մը պատրաստած է Մակեդ. կամի միտէին կատարած արարքներուն մասին. օկիլքէն մինչեւ Սարաֆօֆի ազատագրութիւնը: Այս յիշատակագիրը պիտի ներկայացուի պետութիւններուն որոնցմէ Ռուսմանական կառավարութիւնը պիտի խնդրէ այդ խնդրին կարգադրութեանը:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Չարը հրամայած է առանց ունէ պայմանի ընդունիլ այն բոլոր պուլկարները կամ քարատաղցիները որոնք Ռուսիոյ զինուորական վարժարանը մտնել կը փափագին, որովհետեւ մինչեւ այսօր բացառիկ պարագաներու մէջ կամ մասնաւոր յանձնարարութիւններով միայն կարելի էր օտար ուսանող ընդունիլ:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

«Բըթի Սու» թերթը յեղափոխական ընկերավարականներու միութեան կեդրոնական վարչութեան մէկ յայտարարութիւնը հրատարակած է, որ կը բողոքէ Չարին Թրանսա այցելութեան դէմ, և կիմացնէ որ իր անդամներէն մին կառավարութեան հարցապնդում պիտի ուղղէ ստրկական այս նոր դէպքին համար:

«Լիպրը Բարօլ» կըսէ թէ՛ Չարին այցելութեան առթիւ, մտադրութիւն կայ ներում շնորհել քաղաքական յանցաւոր յայանի Տէրուլէտի, Էպէրի և Պիւֆէի, բայց կէրէնը դարձեալ տարագիր պիտի մնայ:

— Լուր կը տարածուի որ Լուպէ յառաջիկայ յունիսին Բէթերպուրիկ և Մօսկուա պիտի այցելէ, որ ներկայ պիտի գտնուի ռուս զօրահանդէսներուն:

Ա Ն Գ Լ Ի Ա

«Բէլ Մէլ կապէթ» կիմացնէ թէ Լօրտ Սալզպրի էտուարտ թագաւորին գահակալութեան հանդէսներէն ետքը պաշտօնէ պիտի հրաժարի: Նոյն թերթը կաւելցընէ թէ Սալզպրին այս որոշման միող շարժառիթներէն մէկն ալ այն վստահութիւնն է զոր ունի իրեն յաջորդող արտաքին գործոց նախարարին, Լօրտ Լանստօուի վրայ: Պալֆուր Սալզպրիի տեղ պիտի անցնի իբր նախարարպետ, միանգամայն պահելով իր նախկին դիրքը Բարլամէնդին մէջ:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Վ. թերթում Մաս Ս. Փ. — Չար զըրկած վեցադարձարտացուած է. թերթին շարունակումը էքսպետիտօրէն «խալումով» եղած է: Մենք պարտական չենք անպատճառ իմացնելու թէ՛ դրամը ստացուած է: Միայն կրկին պահանջելու իրաւունքը չունինք:

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հանդիս աւելայ, հոյագործակաւ, զիսակաւ եւ արուեստագիտակաւ Հիմնադիր անօրէն Գարեգին Գ. Մեծսուրեան Հրատարակում է Գրք թիւը, շահեկան բովանդակութեամբ: Տարեկան բաժնեգիրն 12 ֆր. դիմել հիմնադրին, 23 rue de la Collegiale PARIS

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նստակ ուղարկելու եւ սոհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է գիմել հետեւեալ հասցեով Իւնիօն Տէ Զիդիսիան Արմ. Լիօրոք րիւ ի Էֆօլ քր Շիվի 2

Սուխ Ժընէվը

Կարգողիւ Յաննանդոյի

Ա Զ Դ

Կը ծախուի 1896ին փրտր. 2ին իշխան Պորիոի մկրտութեան առթիւ սպաւած գործածուած նամակագրօշներ 1—5—15—25 սանդիմ:

Գիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ Վառնա

Отговорникъ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна